

ԱՄԱՆՈՐԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Նեկտամբերի 81, հինգշաբթի: Անցնող
տարվա վերջին օր:

Մայր Աթոռի դպրավոր կամարների տակ
ամանորյա ուրախ երեկո է: Ամենուրեք տի-
րում է ոգևորություն, աշխատություն: Ինչ-որ
արտակարգ մի ուրախություն համակել է
բրոբին:

Հայկական քաղցրահամ մրգերով, գինի-
ներով և այլ տեսակի քարիչներով են ծան-
րաբենսկած հոգևոր ճեմարանի հանդիսու-
թյանց դահլիճում Ամանորի համար պատ-
րաստված լիառատ սեղանները: Նրանց
շուրջ համախմբվել են Մայր Աթոռի միա-
բանությունը, Գերազուն հոգևոր խորհրդի,
Վերսուգիշ հանձնաժողովի, «Էջմիածին»
ամսագրի խմբագրական կազմի անդամնե-
րը, հոգևոր ճեմարանի դասախոսական
կազմն ու ուսանողությունը, մայրավանքի
պաշտոնեալությունը և այլ հրավիրյալներ, ո-
րոնք անսահման երախտագիտությամբ են
լցված դեպի Մայր Աթոռ և Էջմիածինը և
նրա արժանքների Գահակալը:

Երեկոյան ժամը 19.30-ին Վեհափառ Հայ-
րավելու, տ. Հայկազուն, տ. Կոմիտաս, տ.
Հովհաննեսերի ընկերակցությամբ,
մոտք է գործում դահլիճ, սրտագին ծափա-
հարությունների ներքո, և օրինում ամանոր-
յա սեղանը:

Սեղանների շորջ ստեղծվում է ջերմ, ըն-
տանեկան մթուղյուն:


Ամանորյա սեղանը դեկավարում է հոգևոր
ճեմարանի տեսչի պաշտոնակատար արժ.

տ. Հովհաննես քին. Մարտիքանը: Տեր հայ-
ուր գեղեցիկ մի ուղերձով դիմում է ազգին
Վեհափառ Հայրապետին՝ շնորհավորելով
Նորին Սրբության Նոր տարին, ապա վեր է
հանում հավիտենականության գիրկն անց-
նող հին ու եկող նոր տարվա խորհուրդը,
ինչպես նաև մարդկային կյանքի նպատակը.
«Մարդ արարածը, որը Աստուծո ատեղծա-
գործության գլուխ-գործոցն է, իր գոյությու-
նը հավերժացնելու, իր նվաճումները ար-
ձանագրելու համար ստեղծել է հավիտենա-
կանության մեջ ժամանակի հասկացությու-
նը, իսկ նոր տարին մարդու համար դարձել
է անվախճան ժամանակի, միշտ վերանո-
րդվող կյանքի խորհրդանիշը»:

Մարդ էակի նպատակը պետք է լինի
կյանքը լցնել աստվածահանո, քարի, հի-
շարժան գործերով, որովհետև կյանքը մար-
դուն տրված պարզեն է հավիտենականու-
թյան մեջ կենդանի մնալու համար», —ասում
է տեր հայրը:

Վերջում տ. Հովհաննես քահանան, դիմե-
լով Հայոց Հայրապետին, ասում է: «Նոր
տարին Ձեր շորջը համախմբվելու և մեր
ոխտերը վերանորոգելու առիթ է: Թույլ
տվեք, Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի
տեսչության անունից շնորհավորել Ձեր Նոր
տարին, մաղթել Ձեզ երկա՛ր, երկա՛ր իսա-
դառ, երջանեկ ու ստեղծագործ տարիներ»:

Այնուհետև Մայր տաճարի լուսարարա-
պետ տ. Հայկազուն արքեպ. Աբբահամանը
առաջին բաժակն առաջարկում է բարձրաց-



ներ Մայր Աթոռի անսատանության, պայծառության և նրա արժանավոր գամակազ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի թանկագին կենաց արկշատության համար:

Եղոր Աերկաները հոտնելայս բաժնէ են քարձրացնում Մայր Աթոռի համերժության և նրա Գամակալի կենաց:

Խանդական մթնոլորտում ճեմարանի երգչախումբը կատարում է «Եջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Ամանորի սեղաների շորջ ստեղծված խանդակառությունը կրկնապատկում էն նոգեկոր ճեմարանի ասեղը՝ իրենց արտասանություններով և երգերով։ Ճեմարանի երգչախումբը, Խորեն Մեջնամեջանի շնորհան դեկավարությամբ, կատարում է «Ճեմարանի քայլեղո», «Կաղանդ է պաօր», «Սեղանն է տասու», «Հայոց գիմի», «Երևան բաղ են արել», «Եղորութի», «Կենաց երգ», «Հոյ նար», «Ֆոռկա, Ֆոռկա», «Գարուն Երևան» իշմբերգերը։

Գ. դասարանի ուսանող Պ. Քեսարյանը արտասանում է Գ. Սարյանի «Օրացուց»-ը, Ա. լսարանի ուսանող Վ. Նաջարյանը՝ Դ. Վարդումանի «Ճան»-ը, Ա. դասարանի ուսանող Ս. Բարոյշյանը՝ ոռուերեն մի ուսանավոր՝ Նոր տարվան նվիրված։

Գ. դասարանի ուսանողներ Ա. Արդինյանը և Հ. Աղաջանյանը դաշնամուրի վրա կատարում են Ա. Խաչատրյանի «Կոպակ» ստեղծագործությունը, Բ. դասարանի ուսանող Վ. Հովհաննեսը՝ Շոյենի «Վալս»-ը։

Հոգևոր ճեմարանի ուսանողության անունից Վեհափառ Հայրապետին ողղված ուղերձ-շնորհավորական խոսք է ասում Ա. լսարանի ուսանող Ա. Արարաջյանը։ Նա վստահեցնում է բոլոր Աերկաներին, որ նոգեկոր ճեմարանի ուսանողները պատմենու կձգուեն էլ ավելի լավ սովորել, զինվել հավատքով ու գիտություններով՝ իրականացնելու համար իրենց վրա դրված բոլոր հովաները։ Իր խոսքի վերջում նա ասում է. «Սիրելի Վեհափառ, տող Զեր սուրբ Աջը մի՛շն նովանի լինի մեզ, տող Զեր հայրական մերը

մի՛շն անպակաս լինի մեզանից, որպեսզի մենք սուալի խանդակառությանը և հավատքով սովորեն և պատրաստ լինենք վաղվա մեր սորք ծառայությանը»։

Նոր տարվա խոներով համականած, հոմգիչ, ջերմ եղացներ են ունենում վրահայոց թեմի սուածնորդ ու Կոմիտաս նպա։ Տեր-Սուլահանյանը, ովասավորաբար Մայր Աթոռում գտնվելով Բուստոնի սիմֆոնիկ հավաայինի մենակատար, մեծանուն երգեհոնահայր Պ. Ժամկոչյանը, «Եշմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանը, հոգևոր ճեմարանի դասախոս Ս. Անդոսյանը։

Այսուհետև խանդական մթնոլորտում ելոյթ է ունենում Վեհափառ Հայրապետը և Նոր տարվա սովորով տաղիս է բոլոր Աերկաներին Իր հայրական պատգամներին ու օրինություններ՝ սրտեռանդն կերպով շարունակելու այս մեծ Հաստատության պայծառության համար կատարվելիք սորք աշխատանքները։

Հոգևոր ճեմարանի Գ. լսարանի ուսանող Արտաշես Մրկանը գրական դիպուկ և զվարձնայի «կաղանդչերեր» է բաժնում միաբանությանը և ճեմարանի դասախոս կազմին։

Մի պահ հանգչում են դահլիճի լոյսերը։ Հոգևոր ճեմարանի երգչախումբ տղաները վաս մումեր ձեռքերին շարքով մտնում են դահլիճ, տեղ գրավում դաշնամուրի մոտ և մումերի դողդոցուն ու փայլվիրող լոյսերի տակ խորհրդավոր ու մեղմորեն երգում են։ Ա. Ծննդյան խորհրդին նվիրված տաղեր ու երգեր. Դաշնամուրի վրա ընկերակցում է երգեհոնահայր Պ. Ժամկոչյանը։

Փոքր ընդմիջումից հետո, հանդիսառության վերջում, տեղի է ունենում վիճակահանություն։ Աերկաներից շորջ 15 հոգի նվերներ են շահում վիճակահանությամբ։

Ժամը 23-ին խանդական մթնոլորտում, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով, ամսարտում է ամսանորյա հանդիսառությունը նոգեկոր ճեմարանի հարկի տակ։

